



ՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

06 մարտի 2013թ.

ք.Գյումրի

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ

նախագահությամբ՝ դատավոր		Ա. Խաչատրյանի
մասնակցությամբ՝	հայցվորի ներկայացուցիչ	Ս. Մխիթարյանի
	պատասխանող	Ս. Հովհաննիսյանի
	պատասխանողի ներկայացուցիչներ	1. Հ. Հովհաննիսյանի
		2. Ռ. Մովսիսյանի
	երրորդ անձինք	1. Գ. Թերզյանի
		2. Ա. Վարդպարոնյանի
	երրորդ անձի ներկայացուցիչ	Գ. Բաղդասարյանի

Դռնբաց դատական նիստում քննեց քաղաքացիական գործն ըստ հայցի «Շիրակ հանրային հեռուստատաղիո» փակ բաժնետիրական ընկերության (պետական գրանցման վկայական՝ 01 Ա 024424) ընդդեմ Սվետլանա Շավարշի Հովհաննիսյանի (անձնագիր՝ AF 0242317, տրված՝ 02.03.2001թ. 016-ից), երրորդ անձ «Գյումրիի հյուրանոցային տնտեսություն» ԲԲ ընկերության (պետական գրանցման վկայական՝ 01Ա 005916), ՀՀ Շիրակի մարզպետարանի, ՀՀ կառավարությանն առնիթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շիրակ մարզային ստորաբաժանման (պետական գրանցման վկայական՝ Բ 004673), Գագիկ Ժորայի Մկոյանի (անձնագիր՝ AH 0374345, տրված՝ 20.04.2007թ. 016-ից), «Մ եւ ԱԱ» ՍՊ ընկերության (պետական գրանցման վկայական՝ 03Ա 063600), «ՑԱՅԳ» ՍՊ ընկերության (պետական գրանցման վկայական՝ 01Ա 024426), Զեմֆիրա Արեստակեսի Ղուկասյանի (անձնագիր՝ AA 0682272, տրված՝ 21.03.1997թ. 016-ից), Անուշավան Վարդպարոնյանի (անձնագիր՝ AC 0361961, տրված՝ 29.09.1998թ. 016-ից), Գալուստ Հարությունի Թերզյանի (անձնագիր՝ AH 0677012, տրված՝ 07.10.2008թ. 016-ից), Արտուր Գարուշի Սարոյանի (անձնագիր՝ AC 0315264, տրված՝ 20.11.1998թ. 030-ից), Մարինե Ավետիքի Սարոյանի (անձնագիր՝ AK 0389928, տրված՝ 21.10.2009թ. 030-ից), Արտուշ Արտուրի Սարոյանի (անձնագիր՝ AG 0693607, տրված՝ 18.05.2006թ. 030-ից), Գարուշ Արտուրի Սարոյանի (անձնագիր՝ AG 0693619, տրված՝ 19.05.2006թ. 030-ից), Արման Արտուրի Սարոյանի, Անի Արտուրի Սարոյանի (անձնագիր՝ AH 0498568, տրված՝ 04.04.2008թ. 030-ից), «Գյումրեցի Գեղամ» ՍՊ ընկերության (պետական գրանցման վկայական՝ 01Ա 034856), Սամվել Ալեքսանի Մեքինյանի (անձնագիր՝ AB 0489132), Հասմիկ Հենրիկի Առաքելյանի (անձնագիր՝ AF 0722200, տրված՝ 10.06.2003թ. 016-ից), Աննա Սուրենի Մարտիրոսյանի (անձնագիր՝ AF 0289088, տրված՝ 04.04.2001թ. 016-ից), Գյումրու քաղաքապետարանի, Գուրգեն Յուրիկի Մինասյանի (անձնագիր՝ AF 0723479, տրված՝ 03.06.2003թ. 016-ից) եւ «Նորմա-Թերզյան» ՍՊ ընկերության (պետական գրանցման վկայական՝ 01Ա 040556)՝ բաժնային սեփականություն հանդիսացող գույքից բաժինն առանձնացնելու պահանջի մասին:

Հայցվոր «Շիրակ հանրային հեռուստատաղիո» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 25.06.2012թ. հայցադիմում է ներկայացրել ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ Սվետլանա Շավարշի Հովհաննիսյանի՝ բաժնային սեփականություն հանդիսացող գույքից բաժինն առանձնացնելու պահանջով Դատարանից խնդրելով Ընկերությանը պատկանող ք.Գյումրի, Արոյան փող., 248/17 հասցեում գտվող մասնաշենքը բնեղենով առանձնացնել մյուս բաժնային սեփականատերերի, այդ թվում՝ պատասխանողի գույքից, հետեյալ եղանակով՝ թույլատրել առանց կապիտալ փոփոխությունների դուռ դնել Ընկերության մասնաշենքի մուտքին, պատասխանողին արժեքի տիրապետել եւ օգտագործել Ընկերության սեփական տարածքը, քանի

որ վերջինս սեփականության իրավունքով իրեն պատկանող ք.Գյումրի, Արսլյան փող., 248/11 հասցեում գտնվող սենյակը կարող է օգտագործել եւ տիրապետել դուրը փակելու եւ շենքի բակի կողմից սենյակին դուր քացելու եղանակով: Հայցադիմումը վարույթ է ընդունվել 29.06.2012թ.:

Դատարանի 09.01.2013թ. որոշմամբ վեճի առարկային նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ են ներգրավվել «Գյումրիի հյուրանոցային տնտեսություն» ԲԲ ընկերությունը, ՀՀ Շիրակի մարզպետարանը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շիրակ մարզային ստորաբաժանումը, քաղաքացի Գագիկ Ժորայի Մկոյանը, «Մ եւ ԱԱ» ՍՊ ընկերությունը, «ՑԱՅԳ» ՍՊ ընկերությունը, Ջեմֆիրա Արեստակեսի Ղուկասյանը, Անուշավան Վարդպարոնյանը, Գալուստ Հարությունի Թերզյանը, Արտուր Գարուշի Սարոյանը, Մարինե Ավետիքի Սարոյանը, Արտուշ Արտուրի Սարոյանը, Գարուշ Արտուրի Սարոյանը, Արման Արտուրի Սարոյանը, Անի Արտուրի Սարոյանը, «Գյումրեցի Գեղամ» ՍՊ ընկերությունը, Սամվել Ալեքսանի Մեքինյանը, Հասմիկ Հենրիկի Առաքելյանը, Աննա Սուրենի Մարտիրոսյանը, Գյումրու քաղաքապետարանը, Գուրգեն Յուրիկի Մինասյանը եւ «Նորմա-Թերզյան» ՍՊ ընկերությունը:

Դատարանի 01.02.2013թ. որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է, իսկ 14.02.2013թ. որոշմամբ այն վերսկսվել է:

Մինչ դատաքնությունը՝ 14.02.2013թ., Դատարանը ստացել է հայցվոր Ընկերության 14.02.2013թ. թիվ Ե-4 գրությունն այն մասին, որ կողմերի միջեւ վեճը լուծվել է արտադատական կարգով՝ Ընկերությունը պատասխանող Սվետլանա Հովհաննիսյանից ձեռք է բերել նրա սեփականությունը հանդիսացող սենյակը, որի պատճառով Ընկերությունը հրաժարվում է Դատարան ներկայացված հայցից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե հայցվորը հրաժարվել է հայցից:

Անդրադառնալով դատական ծախսերի հարցին, Դատարանը գտնում է, որ այդ հարցը պետք է համարել լուծված, քանի որ օրենքով սահմանված չափով պետական սուրբը հայցվորի կողմից վճարված է:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110, 130-132, 140 հոդվածներով՝ Դատարանը.

Վ Ճ Ո Ւ Շ Ց

Քաղաքացիական գործի վարույթն ըստ հայցի «Շիրակի հանրային հեռուստատադիտ» փակ բաժնետիրական ընկերության ընդդեմ Սվետլանա Շավարշի Հովհաննիսյանի, երրորդ անձ «Գյումրիի հյուրանոցային տնտեսություն» ԲԲ ընկերության, ՀՀ Շիրակի մարզպետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շիրակ մարզային ստորաբաժանման, Գագիկ Ժորայի Մկոյանի, «Մ եւ ԱԱ» ՍՊ ընկերության, «ՑԱՅԳ» ՍՊ ընկերության, Ջեմֆիրա Արեստակեսի Ղուկասյանի, Անուշավան Վարդպարոնյանի, Գալուստ Հարությունի Թերզյանի, Արտուր Գարուշի Սարոյանի, Մարինե Ավետիքի Սարոյանի, Արտուշ Արտուրի Սարոյանի, Գարուշ Արտուրի Սարոյանի, Արման Արտուրի Սարոյանի, Անի Արտուրի Սարոյանի, «Գյումրեցի Գեղամ» ՍՊ ընկերության, Սամվել Ալեքսանի Մեքինյանի, Հասմիկ Հենրիկի Առաքելյանի, Աննա Սուրենի Մարտիրոսյանի, Գյումրիի համայնքի, Գուրգեն Յուրիկի Մինասյանի եւ «Նորմա-Թերզյան» ՍՊ ընկերության՝ բաժնային սեփականություն հանդիսացող գույքից բաժինն առանձնացնելու պահանջի մասին, կարճել՝ հայցվորի կողմից հայցից հրաժարվելու հիմքով:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից 1-ամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ